

կին, Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը, փոխարքայի դիւնատան ծառայողներ; Թիֆլիսի քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամներ, ազնուականների պարագլուխը, արհեստաւորների գլխաւորը և այլն:— Քաղաքագլուխը կոմս փոխարքային մատուցանելով աղուհաց փայտէ ափսէով, ողջունեց նորա գալուստը մի ընդարձակ ճառով քաղաքի կողմից, իսկ Թիֆլիսի ամեն ազգի տիկիններ մատուցին փոխարքայի ամուսնուն ծաղկէփնջեր:

Կայարանից փոխարքան իւր շքախմբով և բոլոր հետեւորդներով, ձի հեծած ուղևորուեց դէպի ոուսաց Սիօն մայր եկեղեցին: Բոլոր փողոցները, ուր որ անցնում էր հանդէսը՝ զարդարուած էին դրօշակներով, կանաչով և գորգերով: Սիօն եկեղեցում փոխարքային դիմաւորեց ս. էքսարիխը յունաղաւան հոգեորականութեան հետ. այնտեղից նա ուղղուեցաւ դէպի Վանքի աւագ եկեղեցին, ուր ընդունեց նորան առաջնորդ Սաթունեան սրբազնը հոգեորական դասի հետ մի ճառով, որ թարգմանում էր ոուսերէն Տ. Բենիկ վարդապետը: Այդտեղ ներկայացաւ փոխարքային մայր եկեղեցու ժրածան երեցփոխան պ. Արշակ Բարեանը և մի քանի ծանօթութիւններ տուաւ կոմսին և կոմսունուն տաճարի կառուցման ժամանակի մասին:

Այդտեղից փոխարքան այցելեց մահմեդականների կրկին մզկիթները, ուր ընդունուուեց նոցա հոգեորականութեան կողմից պատշաճաւոր կերպով:

Այնուհետև փոխարքան գնաց պալատ, ուր նորին պայծառափայլութեան ներկայացան բարձրաստիճան անձեր, քաղաքների, ընկերութիւնների, բանկային և այլ հաստատութիւնների ներկայացուցիչներ, հիւպատոսներ, լրագիրների խմբագիրներն և այլն:

Հետեւեալ օրը, մայիսի 6-ին, փոխարքային ներկայացաւ Ազգիս Վեհ. Կաթողիկոսի ուղարկած պատգամաւորութիւնը՝ սրբ. Գէորգ արքեպիսկոպոս Սուլքինեան երկու վարդապետներով, որ մատոյց նորան նորին Ս. Օծութեան ողջոյնը, առ որ փոխարքան յայտնելով իւր չնորհակալութիւնը՝ աւելացրեց թէ ինքը մօտ ժամանակում կայցելէ Վեհ. Հայրապետին Ս. Էջմիածնում:

Այն խառնաշփոթ կացութիւնը, որի մէջ ներկայումս գըտնում է Ռուսիան, տարօրինակ երևոյթների վկայ է դարձնում մեզ: Երկրի քաղաքական և ընկերական կեանքի հանգամանք-

ներն այսպէս են բարդուել, որ այսօր սկսել է բնական և հասկանալի թուալ այն, ինչոր գեռ երէկ թում էր երևակայութիւն, ցնորք և դաւաճանութիւն:

Ով կարող էր մտածել դեռ մի տարի առաջ, որ Ռուսիայի ներքին քաղաքականութիւնն այսօր պիտի կծու քննադատութեան ենթարկուի նոյն իսկ այնպիսի անհատների և հաստատութիւնների կողմից, որոնք իրանց ամբողջ կեանքի ընթացքում և իրանց հոգու կարծեցեալ անկեղծութեամբ եղել են նոյն այդ քաղաքականութեան եռանդուն ջատագովերը։ Պարզ է, որ արուեստական ուժով ըռնուած թանձր վարագոյրը ճապոնացիների զօրեղ ձեռքով հեռացուել է հակայական մարմնի վրայից, և այսօր տեսնում են այդ մարմնի սոսկալի նեխուածութիւնը նաև նրանք, որոնք մինչև այժմ կոյր էին կամ ձեռնտու էին համարում իրանց անձնական շահերի համար կոյր ձեանալ։

Հասարակական բողոքող և հարուածող մտքի վիթխարի հեղեղը կլանել է ամենքին և քշում, տանում է իւր հետ մարդկանց դէպի մի տակաւին անորոշ բայց համեմատաբար լուսաւոր վայր, ուր նրանք պիտի վայելին ընութիւնից իրանց սահմանուած իրաւոնքներն ու բարիքները։ Եւ այդ հեղեղին այսօր ակամայ անձնատուր են լինում մէկը միւսի ետեից նոյն իսկ նրանք, որոնք եղել են միշտ նրա դէմ պատուարներ։

Այս, Ռուսիայի հարիւրաւոր տարիների անշարժ կեանքի այժմեան փոթորիկը և ուրախալի է և սոսկալի։ Երբ մարդ փոքր ինչ ուշադիր հետեւում է ոուս մտքի այժմեան արտայայտութեանը, անկարող է զսպել իւր զարմացումը։ Լոում ես առատամիտ դատողութիւններ՝ այնպիսի բերաններից, որոնք մինչև այժմ յետադիմութեան, խաւարի և անշարժութեան փաստաբաններ։

Ռուս մտքի արտայայտիչ տարրերը—գրականութիւնը պարբերական մամուլը և հասարակական հաստատութիւնները երբէք չեն փայլել իրանց քաղաքացիական համարձակութեամբ։ Երկաթէ ձեռներով ճշուած՝ նրանք միշտ եղել են խեղճ և ողորմելի, կարող ենք ասել, առանց որևէ բացառութեան։ Մամուլի նոյն իսկ անկաշառ համարուած օրգանները դեռ անցեալ տարի ցոյց էին տալիս մտավախութեան այնպիսի եղկելի օրինակներ, որոնցից զգայուն մարդու սիրան էր պղտորւում։ Եւ երբ մեզ ասում էին, թէ այս ինչ լրագիրը կամ ամսագիրը համարձակ է և անկեղծ, մեզ թուում էր, թէ դա մի կծու հեգնութիւն է ոուս մամուլի վերաբերմամբ։ Բիւրօկրատիայի ճընշող ձեռքը բոլորի կոկորդը սեղմել էր։ Բաւական է ասել, որ

«Ռյուսկիա Ենք.» նման պարզ, ակադէմիական մի օրդան համար—տում էր ազատամիտ իւր մաղձ շարժող օլիմպիական սառնութեամբ: Բաւական է ասել, որ ոռու հասարակութեան լուսամիտ համարուած դասի համար երկնային մասնանա էր մի որևէ է ազատամիտ կոչուած լրագրում կարդալ որևէ մութ ակնարկ երկը ներքին կամ արտաքին քաղաքականութեան այս կամ այն սխալի մասին: Ակնարկը ձեռք է ձեռք էր անցնում, և նրա հեղինակը կամ հրատարակող օրդանը բիչ էր մնում հերոս հոչակուէր:

Նոյն եղկելի վիճակի մէջ էր—և այժմ իսկ է—ոռու գեղեցիկ գրականութիւնը—վիպասանութիւնը, գրաման և այն: Մի Գօրկիյ, որ յաջողել է իւր այս կամ այն պիեսի կամ վէպիկի մէջ մի սուր դարձուած գործածել, համարում է նոր խօսքի մարգարէ: Մի Զեխօվ, որ ամբողջ կեանքում միայն եզրվացու առակներով է արտայայտել ոռու ողորմելի մտքի տուայտանք՝ ները, քիչ է մնացել ոռու Շելլէր հոչակուի:

Այսքան ողորմելի և խղճալի էին դեռ մինչև վերջին ամիսները ոռու գրականութիւնը և ոռու մամուլը իւր մտավախութեամբ:

Այսօր նկատուում է հակառակը: Այսօր համարձակութիւն են ստացել պարզ և դրական ոճով խօսելու ոչ միայն նրանք, որոնք վաղուց կարօտ էին զգում այդպէս խօսելու, այլև նըրանք, որոնք դէմ էին ամեն մի ազատ խօսքի:

Ահա տասնեակ տարիներ է մտքի ամեն մի թոփք սպանող սառն Պետերբուրգում հրատարակուում է «Ընթերցանութիւն» (Լոյս) անունով մի թերթիկ, որ, չընայելով իւր անուանը, եղել է ամենախաւար գաղափարների բարողիչ: Նրա խմբագիրն է ոնն Վ. Վ. Կոմարով: Այդ միենոյն մարդը հրատարակում է և մի ամսագիր «Ռյուսկիա Ենքտանէ» անունով, որ նոյնչափ լուսաւոր է, որչափ և յիշեալ «Լոյս» լրագիրը: Տարիներ անընդհատ այդ տխրահոչակ հերոսը հալածել է բոլորը, ինչոք եղել է բարի, լուսաւոր, յառաջադէմ: Նա հալածել է հայերին, լեհացիներին, ֆինլանդացիներին, հրէաներին, համարել է բոլորին նենգամիտ, խարդախ, դաւաճան: Նա հալածել է և իւր ազգի ազնիւ զաւակներին: Եւ միայն մի սրբութիւն է ունեցել—բիւրօկրատիան և նրա միջնադարեան քաղաքականութիւնը:

Այժմ այդ մարդն էլ է փոխել լեզուն և սկսել է խօսել իւր համար անսովոր ոճով: Ցարձակուելով ոռու բիւրօկրատիայի վրայ, Կոմարօվն իւր ամսագրի վերջին համարում «Խօս.

Վրեմյա լրագրի խաւարամոլ աշխատակիցներից մէկի՝ Նիկօլայ Էնգելհարդի բերանով դատապարտում է կծու լեզուով կառավարութեան «յամառ սիսայները», «կոյր նիւթամոլութիւնը» և «իսկական սլաւոնական անհեռատեսութիւնը»: «Ռուս կառավարութիւնը, ասում է ամսագիրը, չի հոգացել իւր կողմը գրաւել հասարակական կարծիքը, նա միայն և միմիայն յենուել է մի կողմից Փիղիքական ոյժի, միւս կողմից ոռւս հասարակ ժողովրդի տարերային հաւատարմութեան կամ աւանդական իշխանութեանը հպատակուելու կոյր սովորութիւն վրայ: Նա հրել է իրանից երկրի բոլոր ազատ մտածող մարդկանց, արգելել է նրանց հրատարակութիւնները, գոռողութեամբ իւր բոլոր արարքներով յայտնել է, թէ պետական կեանքի և գործունէութեան համար բնաւ հարկաւոր չէ ազգային հանճարի ազատ միտքը, այլ բաւական, է միայն... Կանցելարիան»:

«Այժմեան մեր խայտառակութիւնը, շարունակում է ամսագիրը, մեր արսափը, մեր զօրքերի պարտութիւնը, հազարաւոր ոռւս մարդկանց գեղներես եապօնացիների ձեռքը գերի ընկնելը, որ յիշեցնում է մօնօլական լծի մոռացուած դարերը, իսկ երկրի ներսում իշխանութեան կատարեալ ապիկարութիւնը և ոչնչութիւնը, հպատակ ազգերի միութեան յաղթանակը անզօր և անկիրթ ոռւս ժողովրդի վրայ—այս բոլորը պատրաստուել է այն հանգամանքով, որ ամբողջ մի դար Ռուսիայում հալածուել է տաղանդը, միտքը, խօսքը»:

Մայրայել միջոցների կողմանակիցները ճնշումները ճնշումներ են պահանջում: Նրանք աղաղակում են. «Մի թոյլ տուէք, զսպեցէք, պահակներ դրէք, կողպեցէք բոլոր դռները»: «Բայց ինչպէս պահել այն, ասում է ամսագիրը, ինչ-որ ներս է գալիս ոչ միայն բոլոր դռներով, այլ և, կարելի է ասել, հասարակութեան ու ժողովրդի կաշուի բոլոր ծակերով»:

Ի՞նչպէս դարմանել ցաւը: Ահա ինդիր: Կոմարօվի ամսագիրը, առանց խնդիրը լուծելու, առաջ է բերում հետևեալ կարծեքը:—

«Այս ուղղումները, կարկատանները և բարւոքումները, որոնք առաջ կարող էին հիացման արժանանալ, այժմ միայն գրգռում են մարդկանց: Խոստումները հաւատի չեն արժանանում: Մաքրուած ռեֆորմների ծրագիրները հանդիպում են ծաղրի: Մտելծուում է մի տրամադրութիւն, որ այժմ մեզանում արտայայտուում է գէպի բիւրօկրատիան, այն է, թէ հարկաւոր չէք մեզ գուք, ոչ բարիներդ, ոչ չարերդ, ոչ իմաստուններդ, ոչ տկարամիտներդ, ոչ լաւերդ, ոչ վատերդ, ոչ վերանորոգիչներդ

և ոչ պահպանողականներդ։ Հարկաւոր չէք դուք – թէկուզ լինիք ոսկեայ և աղամանդեայ։ Հեռացէք, տեղ աղատեցէք»... Հարկաւոր է տասնեակ տարիներ գրգռել, որպէս զի այսպիսի գրգռ- ման հասցնել։

«Մենք չենք ասիլ, կցում է այս խօսքերին Կօմարօվի ամ- սագիրը, թէ որտեղից ենք վերցրել ոուս բիւրօկրատիայի այս բնորոշումը։ Այսուղ գոյները թանձրացրած են, հարկաւ, բայց նոյն իսկ պաշտօնեաները խոստովանում են, որ ճշմարտութիւն կայ այս կարծիքի մէջ»։

Այսպէս են խօսում այսօր այն մարդիկ, որոնք տասնեակ տարիներ շարունակ ծունկ են չոքել և խունկ ծխել բիւրօկրա- տիայի առջև։

Սակայն ինըը բիւրօկրատիան իսկ զգում է թարմ օդի պահանջ։

Ապացոյց այն գրութիւնը, որ այսօր պտտում է Պետեր- բուրդի պիտօնական հիմնարկութիւններում ծառայողների մէջ և ատորագրուում։ Այս գրութեամբ ոուս պաշտօնեաները տէրու- թիւնից պահանջում են վերանորոգութիւնների շուտափոյթ ի- րատործում։ Նրանք խոստովանուում են, որ այլ ևս անզօր են սեպհական ուժերով վարել պիտօնական հսկայական մեքենան։ Եւ ինքն իւր բերանով դատապարտելով իրան, ոուս բիւրօկրա- տիան պահանջում է ժողովրդի ներկայացուցիչների միջամտու- թիւնը պիտօնական գործերում։

Այսքան փոխուել է ամեն ինչ Ռուսիայում... առ այժմ... միայն խօսքով։

Այն ինչ, խօսքը անհրաժեշտ է համարւում գործի փոխել որքան կարելի է շուտ։ Այս է պահանջում ոչ միայն երկրի, այլ նոյն իսկ բիւրօկրատիայի շահը։ Եւրոպական մամուլը, որ վերջերս իւր գլխաւոր ուշագրութիւնը Ռուսիայի ներքին զրու- թեանն է նուիրել, այս մասին նախազգուշացնում է անընդհատ։ Եթէ այսօրուայ տարրական ճշմարտութիւնները զդալու համար հարկաւոր էին ոուսաց զօրերի աւելի քան մի տարուայ սոս- կալի պարտութիւնները և անթիւ կորուստները, պիտութեան երեք միլիարդ ծախքը, եթէ թեթև վերանորոգութիւնների պա- հանջը բիւրօկրատիային ըմբռնել տալու համար բաւական չե- ղան տարիների խուլ բողոքը խեղճ, ողորմելի, քաղցած ու մերկ ոուս ժողովրդի, այլև պահանջուեց արիմնեղութիւն, միթէ չը պիտի երկնչիլ ապագայի բարդութիւններից։ Մաքի մեծ ոյժ հարկաւոր չէ հասկանալու համար, որ այն, ինչ-որ

այսօր չի գոհացնում հասարակութեանը, կարող էր հրճուանք պատճառել նրան մի քանի տարի առաջ: Համեմատեցէք մտքով փետրուարի 16-ի մանիֆեստի և 12-ի ռեսկրիպտի թողած տը-պաւորութիւնը այն տպաւորութեան հետ, որ կարող էր համա-նման մի ազդարարութիւն գործել հասարակութեան վրայ թէ կուզ մինչև ոռուս-ճապոնական պատերազմը, և դուք կըպատ-կերացնէք ժամանակի նշանակութիւնը: Անհրաժեշտ էր ժամա-նակի ոգին ըմբռնել և մասնաւոր ոչփօրմների ծրագիրն աւելի վաղ հրատարակել: Թանի որ ժամանակը արհամարհուեց բիւ-րոկրատիայից, հասկանալի է, որ պահանջները կարող են ա-ռաւել խիստ ձև ստանալ:

Հասարակութեան միտքն այժմ Ռուսիայում առաջադիմում է զարմանալի արագութեամբ: Պատճէցը խորտակուել է և լոյսը ոռուս ինտելիգենցիայի փոքրիկ սենեակից սկսել է տարածուել ժողովրդի լայնածաւալ շրջաններում: Այն, ինչ-որ մի փոքրիկ դասի գիտակցութեան մէջ էր, այսօր դարձել է ամբոխի սեպ-հականութիւն: Եթէ ոռուս ինտելիգենցիայի ամենախաւարամիտ բաժինն իսկ, ի դէմս Սուվորիների և Կօմարօմների, անցել է ա-զատամիտների բանակը և այսօր խօսում է շուտափոյթ վերա-նորոգութիւնների մասին, կարելի՞ է, արդեօք, երաշխաւորել, որ աւելի առաջ գնացածները չեն արագացնիլ իրանց քայլերը դէպի հեռու, թէկուզ տարիների ընթացքում խաւարը պաշտած-ների ընկերութիւնից փախչելու համարը էվոլիւցիայի օրէնքնե-րը անխուսափելի են, նաև անյաղթելի: Նա, որ միշտ ինձնից յետ է մնացել և այսօր ճգնում է ինձ մօտենալ, մի գորեղ խը-թան է ինձ համար՝ աւելի առաջ շարժուելու և միշտ իրան յետ թողնելու:

Մոքերի այսպիսի արագ առաջընթացման միջոցին պե-տութեան ամենամեծ հստութիւնը կըինի միջին ուղին ընտ-րելը: Եւ այս միջին ուղին է ներկայում՝ ոռուս ազատամիտ կու-սակցութեան բռնածը: Տալով գոհացում այդ կուսակցութեան պահանջներին, կառավարութիւնը ձեռք կըքերի նրա անկեղծ բարեկամութիւնը և, յենուելով նրա աջակցութեան վրայ, կա-պահովի իւր գոյութիւնը: Նա կըխուսափի ոչ ցանկալի բարդու-թիւններից, որոնց կարող են առաջացնել ոռուս ինտելիգեն-ցիայի աւելի արմատական մասը և ոռուս ժողովրդի աւելի ան-հանգիստ տարրերը: Մի ուրիշ ապաւէն կարող են լինել վերա-նորոգուած պետութեան համար հպատակ ազգերը: Ով ուշադիր հետևել է այդ ազգերի մինչև այսօր արտայայտած պահանջնե-րին, կարող է երաշխաւորել նրանց անկեղծ բարեկամութիւնը

չափաւորութեան հետո Կառավարութիւնը առիթ չունի այս կողմից երկմտելու: Բոլոր ազգերի կարիքների ծրագիրները իրանց ընդհանուր ոգով համապատասխանում են ոռւս ազտամիտ կուսակցութեան չափաւոր պահանջներին: Ոչ մի ազգ ծայրայեղութիւնների չի դիմում իւր պահանջների մէջ և բոլորի ձըգտումների մէջ կարմիր թելով -նացնում է հաւատարմութեան զգացումը: Այս հանգամանքը նշանաւոր պիտի համարել ոռւս զրօշակի ապահով ծածանման համար Լեհաստանում, ինչպէս և Ֆինլանդիայում, Կովկասի լեռներում, ինչպէս և Միջին Ասիայի անապատներում: Ռուս հասարակութիւնը պարտաւոր է գնահատել իւր օտարազգի և օտարադաւան եղբայրակիցների այս զգաստութիւնը և համակուել եղբայրական անկեղծ զգացումով: Այս մի գեղեցիկ ապացոյց է, որ չարաչար սխալուած են եղել այն ոռւս շօվինիստները, որոնք տարիներ շարունակ հալածել են իրանց օտարազգի հայրենակիցներին, մի զարմանալի տըխմար յամառութեամբ նրանց Ռուսիայի թշնամի համարելով: Ո՞չ, լեհացին և հայը, ֆինլանդացին և վրացին նախ և առաջ իրանց համարում են ընդհանուր մի պետութեան հպատակ, ապա առանձին ազգութիւնների զաւակ: Տուէք իւրաքանչիւրին ազատ իրաւունք իւր կրօնը դաւանելու, իւր լեզուն սովորելու, իւր պատմութիւնը սիրելու, իւր գրականութիւնը մըշակելու, իւր որդկերանց կրթելու, իւր հողը հերկելու, մի անջատէք նրան ընդհանուր հայրենիքից բացառիկ օրէնքներով և կըտեսնէք, որ նա եթէ ոչ աւելի գէթ ոչ պակաս օգտակար քաղաքացի է Ռուսիայի համար: Եթէ ուզում էք սիրելի լինել, սիրեցէք և մեզ, հակառակ դէպքում՝ սերմանած չարութիւնը որքան մեզ, նոյնքան և, գուցէ աւելի, սերմանողի համար է վնասակար: Մենք չենք ուզում անջատուած լինել մի հօգոր պետութիւնից և զրկուել նրա հովանաւորութիւնից: մի հըէք մեզ և մի զրկուէք մեր օգնութիւնից, առանց որի դուք կարող էք... տկարանալ:

Բուն ոռւս ինտելլիգենցիայի ազնիւ մասի պահանջները չեն արհամարհում միւս ազգութիւնների բարոյական շահերը: Նոյն բարեկամական ոգով են կազմուած, ինչպէս ասացինք, եւ բոլոր օտար ազգութիւնների ծրագիրները: Եւ այդ բոլոր ժպետիցիանիրը, ի մի առնուելով, ցոյց կըտան կառավարութեանը միջին ուղին, որի վրայ պէտք է զնուի պետութեան ապագայ ուժիմը: Փոխադարձ զիջումներ և կօմպօմիսներ անշուտ կը լինին, ի նկատի ունենալով, որ յամառութիւնը երբէք բարի հետեւանքներ չի կարող ունենալ: Ամենից առաջ պետութեանը հետեւանքներ չի կարող ունենալ:

թեան ապագայ ապահովութեան համար անհրաժեշտ է մի օղակով կապել իւր հետ բոլոր հպատակներին առանց կրօնների և աղջերի խտրութեան:

Կովկասը անհամբեր սպասում է իւր փոխարքային. Արդարացի յոյսեր են տածում, որ կոմս Վարանցօվ-Դաշկօվի գալստեամբ երկիրը կըխաղաղուի և մըրկուած կեանքը կը մտնի իւր նօրմալ ընթացքի մէջ:

Ազգաբնակութիւնը յոգնել և ուժասպառ է եղել անսովոր խառնակութիւններից: Ամեն ինչ գուրս է եկել իւր սովորական շրջանակից: Զեյյա ոչ կեանքի և ոչ գոյքի ապահովութիւն: Հինը չի գոհացնում, նորը դեռ չի ծնուել, և այս անցողիկ դըրութեան մէջ մարդիկ չեն կարող երաշխաւորել իրանց վաղուայ ապահովութիւնը: Սկսած նասպից ծովից մինչև Սև ծովի ափերը երկիրը փոթորկի մէջ է: Ուր նայում ես, միայն տխուր և սոսկալի պատկերներ ես տեսնում:

Բագուն դեռ մինչև այժմ չի ընդունել իւր սովորական կերպարանքը: Դեռ այնտեղ տիրում է հայերի ու թուրքերի մէջ փոխադարձ կասկած, ամենաւտարմութիւն և երկիւու: Դեռ ամեն մի չնչին դէպք—մասնաւոր սպանութիւն, վէճ, վիրաւորանք—առաջացնում է աղմուկ և իրարանցում: Դեռ շատերը ժախչողներից չեն վստահանում վերադառնալ իրանց տները և քիչ չէ այնպիսիների թիւը, որոնք պատրաստում են առ միշտ հեռանալ մեր երկրի այդ ամենաարդիւնաւէտ մայրից:

Սենատօր կուզմինսկու մասնաժողովի գործունէութիւնը տակաւին իւր սկզբնական վիճակի մէջ է: Երբ պիտի վերջանայ այդ քննութիւնը, երբ պիտի հրատարակուին նրա հետևանքները—դեռ յայանի չէ: Այս անորոշութիւնը լարուած և յուղուած գրութեան մէջ է պահում ոչ միայն բազուցիներին, այլ և բոլոր հայերին:

Մենք սկզբում կարծում էինք, որ սենատօր կուզմինսկին Պետերութիւնը ուղարկուած է միայն փետրուարի հայ-թրքական կոտորածների պատճառները պարզելու: Յայտնուեց, որ նրան յանձնուած է քննել ամբողջ Բագուի նահանգի կառավարչական նաև քաղաքային հիմնարկութիւնների գործունէութիւնը: Այս հանգամանքն ունի իւր լաւ և վատ կողմերը: Նա լաւ է այն տեսակէտից, որ մեզ համար կըպարզուին շատ մութ կէտեր նահանգի կեանքից և վատ այն տեսակէտից, որ փետրուարի արիւնհեղութեան պարզաբանութիւնը կը յետաձըգուի:

Առ այժմ յայտնի է, որ սենատորը ուշ է դարձրել Բարգուի քաղաքային և նաւթային հողերի դրութեան վրայ: Պետերբուրգ հաղորդուած մասնաւոր աեղեկութիւններից երեսում է, որ քննութիւնը երևան է հանել մի շաբք եղծումներ քաղաքային հողերի վերաբերմամբ: Օօ, այս կողմից պատկառելի քննիչը շատ մութ պատմութիւնների հետ կըծանօթանայ, եթէ ժամանակ ունենայ գէթ միայն քաղաքային խորհրդարանի քսանուհնգամեայ տիուր գործունէութիւնը քննելու: Ինչ վերաբերում է նաւթային հողերին, Կուզմինսկու մասնաժողովը ամեն օր ստանում է բողոքներ և գանգատներ, որոնք ցոյց են տալիս, որ այդ հողերից շատերը մեծ կապիտալիստների ձեռքն են անցել զանազան միջոցներով: Առանձնապէս դառնադին գանգատում են փոքրիկ նաւթահողերի կապալառուները, որոնց դրութիւնը իրօք անտանելի է և որոնք կամայ-ակաւայ հարկադրուած են եղել, անբարեխիղճ մրցման դօրութեամբ, թողնել իրանց հողերը կամ վաճառել խոշոր կապիտալիստարդիւնաբերներին:

Կոտորածնների վերաբերմամբ տակաւին միայն այն է յայտնի, որ սենատորը առայժմ զբաղուած է սկզբնական քննութեամբ. նա ինքն անձամբ այցելում է տեղական հիմնարկութիւնները, խօսում է հայ և թուրք հոգևորականութեան հետ, հարց ու փորձ է անում վնասուածներին: Դեռ յարգուած չէ տեղական հասարակութեան միջամտութիւնը, որով ինսդրուում է՝ առ ժամանակ պաշտօնից հեռացնել գործի մէջ շահագրգուուած ոստիկանական պաշտօնեաններին: Հասարակութիւնը երկիւղ է կրում, որ ոստիկանութիւնը իւր ազդեցութեամբ կարող է արգելք լինել մասնաւոր վկանների անկեղծութեանը և անաշառութեանը:

Անկասկած վերջ ի վերջոյ սենատոր Կուզմինսկին կը պարզի վետրուարի արիւնալի օրերի պատճառները: Ամեն ինչ կախուած է տեսակէտից և տրամադրութիւնից... Ցանկանք որ տեսակէտն արդար լինի, երևան գան Բարթողիմեան օրերի քստմնելի հերոսները և արժանանան իրանց պատժին:

Իսկ առ այժմ նրանք գեռ երկրի վրայ շրջում են անպատիմ, և երկիրը կարողանում է հանդուրժել նրանց ոտների առ պականութեանը և օդը չի վարակում նրանց գարշահոտութեամբ...

---

Անցեալ մեր տեսութենում խօսեցինք Գուրիայի խառնակութիւնների մասին: Գիւղերի յուզուած դրութիւնը շարունակ-

առև է այժմ և ոչ միայն Գուրիայում, այլև ամենուրեք, գլխաւորապէս Քութայիսի նահանգում և Սուխումի շրջանում։ Ահա Կովկասից Պետերբուրգ պաշտօնապէս հաղորդուած մի աեղեկութիւն, որ բնորոշում է երկրի ամբողջ կացութիւնը։ Եղելութիւնը տեղի է ունեցել Թիսնեթի գաւառում։ Ապրիլի 4-ին այդ գաւառի թօլաթսօփելի գիւղը գալիս են մի քանի աժիտատօրներ (քաղաքական քարոզիչներ) և մի տեղ ժողովում հինգ գիւղերի համայնքներին։ Այս մասին տեղեկութիւն ստանալով, գալիս են պրիստաւն և տեղական կողակների սպան և գիւղացիներից պահանջում են, որ իրանց յանձնեն աժիտատօրներին։ Ամբոխը չի համաձայնուած և ցիցերով յարձակուում է կողակների գրայ երկու անգամ կրակելով սպային։ Այս ժամանակ կողակները թրերով յարձակուում են ամբոխի վրայ, երկուսին սպանում են և տասին վիրաւորում։ Ամբոխը ցրուում է։ Նոյն օրը թօլաթսօփելի գիւղի բնակիչների մի մասը գիւղի հրապարակն է բերուած քահանայ թուրքածէին, 75 ամեայ զառամեալ տիրացուին և հարուստ գիւղացի Գուգութաշվիլուն։ Թոլոր երեքին սարպում են չոփել, վերցնուած են մի սեղան, և աժիտատօրներից մէկը, բարձրանալով նրա վրայ, 700 հոգուց բաղկացած ամբոխին համոզում է՝ պատժել քահանային, տիրացուին և հարուստ գիւղացուն, որոնք համարձակուել են գնալ և գանգատուել գաւառապետին։ Ամբոխը, աժիտատօրների խորհրդով, վճռում է Գուգութաշվիլուն ենթարկել 3000 ռ. տուգանքի, իսկ քահանայի միրուքը սափրել։ Մի գիւղացի տիրացուի միրուքից զջլում է մի կտոր։

Լսելով այս մասին, պրիստաւ Տէր-Գրիկուրօվը պօդեսառու Լօրօվի, 15 կողակների և երկու ստրամիկների հետ գալիս է և, թողնելով կողակներին 30 քայլ հեռուում, մօտենում է ամբոխին, որից անջատուում են քահանան, տիրացուն և Գուգութաշվիլին, դառնուում է գիւղացիներին և օրէնքի անունով խնդրում է խելքի գալ, յանձնել իրան աժիտատօրներին և ցրուել Պրիստաւի խօսքերն ապարդիւն են անցնուած։ Այն ժամանակ նա թոյլ է տալիս կողակներին իրանց ուզածն անել։ Պօդեսառու Լօրօվը, կողակների հետ մօտենալով գիւղացիներին, նոյնպէս ուզում է խօսքով համոզել նրանց խելքի գալու, սակայն ամբոխը փայտեր է բարձրացնուած նրա վրայ։ Մի գիւղացի ծանր հարուստ է տալիս Լօրօվի վզին։ Կողակները անսիրապէս մտրակներով յարձակուում են ամբոխի վրայ։ Իսկ երբ ամբոխը պատասխանուած է նրանց փայտերով, կողակները հանում են պատեաններից իրանց թրերը։ Առաջին զոհը դառնուած

է գիւղացի Զխուբրիա Կօրիալուկին։ Այդ գիւղացին ունեռ էր և գիւղացիներին հարստահարում էր, խորամանկութեամբ մի կողմից նրանց հետ գործելով զոյութիւն ունեցող ուժիմի դէմ, միւս կողմից, ձևանալով կառավարութեան հաւատարիմ։ Ամբոխը երեք բովէում ցրւում է, թողնելով կուփ տեղում մի սպանուած և 11 վիրաւոր, որոնցից երկուսը մեռնում են Վիրաւորներին օգնելու համար կանչւում է գիւղական բժիշկը։ Գաւառապետի պահանջով գիւղացիները մատնում են անկարգութիւնների մեղաւորներին, ձերբակալելով նրանց իրանց միջից ընտրուած անձանց ձեռքով։

Ներկայումս կատարեալ խաղաղութիւնը վերականգնուած է, հաղորդում է պաշտօնական տեղեկութիւնը Ս. Պետերբուրգի հեռագրական գործակալութեան միջոցով։ Գիւղական վարչութիւնները բացուած են։ Տանուտէրներին, դատաւորներին և գրագիրներին հրամայուած է դառնալ իրանց պաշտօնավարութեանը։ Գիւղացիները հպատակուել են բոլոր կարգադրութիւններին։ Նրանք ընկնուած են և անցըից խորը վշտացած, զղջում են և մեղքը գցում աժիտատօրների վրայ, որոնց խոստանում են բոլոր համայնքների մէջ ձերբակալել և չը տալ նրանց ոչ ապաստարան, ոչ ուտելիք և ոչ առաջնորդներ։

Ահա թէ ինչեր են կատարում Կովկասի գիւղերում ներկայումս Հազիւ մի տեղ յաջողուած է հրդեհը հանգնել, բռնկւում ուրիշ տեղ, Եւ տեղական իշխանութիւնները միանգամայն շփոթուած են։ Ոչ պակաս յուզման մէջ է և քաղաքների ազգաբնակութիւնը։

Հասկանալի է, որ այսպիսի խառն հանգամանքներում երկրի խաղաղութիւնը վերականգնելու մօտաւոր ոյժը համարուած է նոր փոխարքայի գալուատը։ Պետերբուրգը շատ է հեռու մեզանից, և բարձրագոյն իշխանութիւնը ոչ ժամանակ և ոչ ոյժ ոյժ ունի Կովկասի մասին առանձին հոգալու։ Մեր երկրի վիճակը կարելի է ասել լիովին յանձնուած է կոմս Վարանցօվ-Դաշկովի բարի հայեցողութեանը։ Թէ ինչ ծրագրով է գալիս կոմսը, տակաւին այնքան էլ պարզ չէ։ Սակայն հասարակութեանը հասած հատուկառ տեղեկութիւններից միայն այն եղացացնել կարելի է, որ ինչ էլ որ լինի մեր փոխարքայի ծրագիրը, շատ բաներում է տարբերուելու նախկին կառավարչապետ Դոլիցինի բաղաբականութիւնից։ Արդէն կոմս Վարանցօվ-Դաշկովը մի քանի անգամ պարզ յայտնել է, որ երկրի

վիճակը բարեկարգելու համար դիմելու է հասարակութեան և յամուլի խորհրդներին ու աջակցութեանը։ Մտոյդ լուրեր են են պտտում, որ մինչև կոմսի գալը Թիֆլիսում կազմուած կը լինին առանձին ընտրեալ յանձնաժողովները բոլոր ազգութիւնների, դասակարգերի և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներից, որոնք բարձր իշխանութեան հետ կը ձեռնարկին երկրի բարենորոգութիւնները։ Այդ գործում մասնակցութիւն կունենայ նաև Հայոց Վեհափառ կաթողիկոսի ներկայացուցիչը։ Մեզ մնում է միայն սպասել համբերութեամբ։ Մենք համոզուած ենք, որ կոմս Վարանցօվ-Դաշկօվը Կովկասի բոլոր ազգաբնակութիւնների կողմից կը հանդիպի ամենաան կեղծ և ուրախ ընդունելութեան։ Մենք շատ տառապանքներ ենք կրես շատ ենք յոդնել և այժմ կարօտ ենք հանդարտ կենցաղավարութեան և խաղաղ առաջադիմութեան պայմանների։ Եւ, այսուամենայնիւ, էլի կունենանք ոյժ ամեն ինչի հանդուրժելու յանուն լուսաւոր և երջանիկ ապագայի...

Ներքին գործերի մինիստր Բուլիգինի մասնաժողովը տակաւին շարունակում է մշակել ժողովրդական ներկայացուցիչների ապագայ համագումարի ծրագիրը։ Մայրաքաղաքի լրագրների ասելով, մասնաժողովը իւր գործը կը վերջացնի շուտով և ոչ ուշ քան յունիս ամսին հասագումարը կը հարաւիրուի։ Թէ ովքեր կը մասնակցեն, այսինքն ժողովրդի նր դասակարգերից որքան թուլով ներկայացուցիչներ այդ ժողովում—դարձեալ յայտնի չէ։ Արտասահմանի լրագիրները, որ սովորաբար ուսւ լրագիրներից աւելի են տեղեակ ուսւաց ներքին գործերին իրը թէ ստոյդ աղբիւրներից հաղորդում են, որ ապագայ համագումարում յամենայն դէպս ազնուականութիւնների և քաղաքային ինքնավարութիւնների ներկայացուցիչները կը մասնակցեն։ Ապահովուած է նաև Ռուսիայի բոլոր տարրեր կրօնների ներկայացուցիչների մասնակցութիւնը, որոնց թիւը կը լինի ընդամենը հինգ՝ ուսւ, հայ, կաթոլիկ, հրէայ և մահմեդական հոգևորականութիւններից։

Մինչ այս մինչ այն՝ տէրութիւնը չի լուսւմ։ Ապրիլ ամսուայ ընթացքում նա հրատարակեց քանի մի ներքին մասնաւոր վերանորոգութիւնների հրովարտակներ։ Ամենից նշանաւորն է Զատկուայ տօների առիթով Կայսերական հրովարտակը հաւատի համբերողութեան մասին։ Նա վե-

քին աստիճանի նշանաւոր է առանձնապէս մեզ, հայեցիս համար: Այսուհետեւ իւր հաւատի համար այլ ևս չըպիտի հալածուի ոչ ոք: Ոչնչանում են այն բոլոր պատիժները, որ սահմանուած էին յիսուն-վաթսուն տարուայ ընթացքում կրօնափոխութեան մասին: Իւրաքանչիւր քաղաքացու իրաւունք է արւում ազատորէն դաւանել այն կրօնը, որը գերազասում է միւս կրօններից: Կրօնափոխութիւնը չի համարում յանցանք: Երկու տարբեր բրիստօնէական կրօններ դաւանող ամուսինների զաւակները կարող են կնքուել այն եկեղեցում, որի մասին համաձայնութիւն կըկայացնեն ծնողները: Խղճի ազատութիւնը յանցանք չի ճանաչուուն: Վերջապէս, զգացուեց, որ այլադաւանների վերաբերմամբ մինչև այժմ գործադրուած խիստ միջոցները, ի պաշտպանութիւն և բարգաւաճում ուռւաց ուզգափառ եկեղեցու, ոչինչ օգուտ չը բերին այդ եկեղեցուն, այլ միայն օտարադաւանների մէջ յղացրին և զարգացրին խուլ ատելութիւն դէպի այն: Վերջապէս, զգացուեց, որ եկեղեցու բարգաւաճումը քաղաքական միտումների հետ կապ չունի, որ ոռւա հոգևորականութիւնը միայն մի սուրբ պաշտօն ունի՝ պահպանել ոռւադաւանների մէջ հաւատի զգացում և սէր դէպի իւր եկեղեցին և ոչ թէ մտնել ուրիշների փարախը և քրիստոնեայ իսկ եկեղեցիններից քրիստոնէութեան համար արբանեականներ որսալ: Պետութեան բարգաւաճումը կրօնների տարբերութեան հետ կապ չունի, հպատակութեան զգացումը նոյնպէս: Կարելի է լինել ուղղափառ բրիստոնեայ և ոչ ուղղամիտ հպատակ և, ընդհակառակը, հայադաւան, կաթոլիկ, բողոքական, հրէայ, մահմեղական, և հաւատարիմ հպատակ ու օգտակար քաղաքացի:

Թանի որ կայսերական այս նոր հրովարտակը կենսական ահազին նշանակութիւն ունի հայերի համար, ցանկալի է, որ Ս. Էջմիածինը առանձին խնամքով վերաբերուի դէպի այն: Անհրաժեշտ է հրովարտակը ոչ միայն թարգմանել, այլև պարզաբանել իւր բոլոր կէտերում և, առանձին գրքոյկով հրատարակելով, տարածել հայ ժողովրդի մէջ քաղաքներում, գիւղերում և ամենուրեք: Ցանկալի է նոյն իսկ, որ հրովարտակի ճշգրիտ իմաստը բացադրուի եկեղեցում բերանացի: Կրօնը հայ ազգի կեանքում տակաւին խոշոր գեր ունի: Ազգի գոյութիւնը նրա հետ է կապուած անխախտ: Եւ ամեն մի օրէնք նրա վերաբերմամբ վերաբերում է եւ այդ գոյութեանը:

Հիւրընկալ Պղտերբուրգը տարբեր ընդունելութիւնների է արժանացնում Կովկասից գնացող պատգամաւրներին: Մինչև այժմ մեր երկրից, չըհաշուելով մասնաւոր անձանց, Պետերբուրգ գնացել են երկու տեսակ պատգամաւրութիւններ՝ մէկը Թիֆլիս, Երևան և Բագու քաղաքներից, միւսը Անդրկովկասեան մահմեդական ազգարնակութեան կողմից:

Հետաքրքրական է այն ընդունելութիւնը, որին արժանացել է Թիֆլիս քաղաքի պատգամաւրութիւնը, որ բաղկացած էր 4 հոգուց—մի հայրից, մի վրացուց, մի ռուսից և մի մահմեդականից: Հասնելով Պետերբուրգ, Թիֆլիսի պատգամաւրները տեղեկանում են, որ մայրաքաղաքի բարձրագոյն շրջանները շատ էլ բարեհաճ չեն վերաբերելու դէպի Թիֆլիսից եկած պատգամաւրները, այն պատճառով, որ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանը իբրև թէ իւրացրել է ամրող կովկասեան ազգաբնակութեան ներկայացուցչութեան իրաւունքը: Պատգամաւրները ներկայանում են կովկասեան փոխարքայ կոմս Վարանցօվդաշօվին, որ, սիրալիր ընդունելութիւն ցոյց տալով հանդերձ, նոյն նկատողութիւնն է անում նրանց, նախադգուշացնելով, որ ինքը ընդունում է նրանց ոչ իբրև պատգամաւրութիւն, այլ իբրև Կովկասից եկած մասնաւոր անձանց: Պատգամաւրները աշխատում են հերքել թիւրիմացութիւնը:

Փոխարքան, լսելով նրանց բացադրութիւնը, սկսում է մանրամասն հարցնել Կովկասի մասին և, ի միջի այլոց, հարցնում է, թէ ինչ միջոցներով, նրանց կարծիքով, կարելի է երկրի ազգաբնակութիւնը խաղաղացնել: Պատգամաւրները ցոյց են տալիս մի քանի տեղական բնաւորութիւն ունեցող միջոցները Սակայն, աւելացնում են, թէ այդ միջոցների իրագործումը հնարաւոր է միայն այն դէպում, երբ երկրի հասարակական ոյժերը ընդարձակ մասնակցութիւն կունենան երկրին վերաբերեալ հարցերի լուծման մէջ: Գլխաւորն այն է, որ Կովկասը չը զրկուի այն բարենորոգումներից, որ նախատեսնուած են դեկտեմբերի 12-ի մանիքէստով և փետրուարի 18-ի ռեսլրիպտով:

Փոխարքան հարցը էլ է պատգամաւրներին, թէ ինչ հիման վրայ Թիֆլիս քաղաքը կարծում է, որ Կովկասը պիտի բացառութիւն կազմի և նրա ներկայացուցիչները չըպիտի մասնակցեն ապագայ համագումարում: Պատգամաւրները տուել են հետևեալ պատասխանը. «Մեզ միշտ մոռացել են կամ աշխաթող արել և եթէ ուժորմներ տուել են, տուել են կրծատած,

ահա ինչու Թիֆլիսի քաղաքային խորհուրդը որոշել է աշխատել, որ իրան և թոյլ տրուի համագումարում մասնակցելու:

Այս առթիւ կովկասեան փոխարքան ասել է, թէ կովկասն այժմ նախկին վայրենի երկիրը չէ, բոլորովին հասունացել է այն ռեֆօրմներն ըստունելու համար, որոնք պիտի տրուին Ռուսիային, ուստի և հիմք չըկայ նրա ներկայացուցիչներին չը թոյլ տալ առանձին խորհրդակցութեան համար հրաւիրուող համագումարում մասնակցելու:

Այնուհետև փոխարքան խնդրել է պատգամաւորներին ազդել ազգարնակութեան վրայ; Կոչ անելով, որ նա հանդարտուի և խաղաղ կուլտուրական աշխատանքի դիմի:

Այդ օրից մի շաբաթ անցած՝ պատգամաւորները ընդունուել են ներքին գործերի մինիստր Բուլիգինից: Պ. մինիստրի առաջին հարցն է եղել, թէ ինչ իրաւունքով են նրանք անմիջապէս եկել իւր հետ յարաքերութեան մէջ մտնելու, քանի որ այս մասին կան առանձին կանոններ և թէ քաղաքային խորհրդարանները միայն տեղական նահանգապետների միջոցով կարող են իւր հետ յարաքերութիւն ունենալ: Հայ պատգամաւոր իշխ. Ալ. Արզութեան-Երկայնարագուլը դրական ոճով պատասխանել է, թէ ներկայ պատգամաւորութիւնը ներկայանում է պ. Բուլիգինին ոչ իրեւ ներքին գործոց մինիստրի, այլ իրեւ առանձին խորհրդակցութեան նախագահի և թէ պատգամաւորութիւնը չէր կարող չը ներկայանալ, թէև պ. Բուլիգինը մինիստր է, որովհետև այդ մի պատահական բան է, որ նա, լինելով մինիստր, նշանակուել է քարձրագոյն հրամանով եւ խորհրդակցութեան նախագահ: Կարճ խօսակցութիւնից յետոյ, Թիֆլիսի պատգամաւորութիւնը խոստումն է ստանում, թէ կովկասի ներկայացուցիչներն էլ պիտի մասնակցեն ապագայ համագումար ժողովում և հրաժեշտ է տալիս հիւրընկալ Պետերութիւնների վրայ:

Ապրիլի 26-ին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճներից մէկում կայացաւ ծնողների ժողով, ուր քննւում էր ոռւս դպրոցների ներկայ վիճակը: Ժողովում ներկայ էր 1000-ից աւելի մարդ երկու սեփից: Միջնակարգ դպրոցների մի քանի ոռւս ուսուցիչներ նաև մի քանի կողմանակի հանդիսականներ հաղորդեցին մի շաբք վերին աստիճանի հետաքրքրական տեղեկութիւններ, որոնք մեծ լոյս էին սփոռում ոռւսաց ներկայ միջնակարգ դպրոցների արմատական թերութիւնների վրայ: Հանդիսականների առջև նկարագրում էին միմեանցից

համոզիչ միմեանցից զօրեղ փաստեր, որոնք անհերքելի ապացուցանում էին, որ ոուս միջնակարգ դպրոցները թէ ամբողջ Ռուսիայում և թէ մանաւանդ Կովկասում վերջին քամունիքներ տարուայ ընթացքում ծառայել են ոչ թէ լուսաւորութիւն տարածելու սուրբ գործին, այլ կողմանակի, ուսման հետ ոչինչ առնչութիւն չունեցող, նպատակների կամ, պարզ ասած, մի սխալ քաղաքականութեան: Տարէց տարի աւելացել են ջանքերը և կարգադրութիւնները՝ ուսման տաճարը փոխել ոստիկանական հիմնարկութեան և մատաղ սերունդների մէջ սպանել գիտակցութիւնն ու ծարաւը դէպի լոյս ու գիտութիւն և դարձնել նրանց անզգայ մերենաներ: Դպրոցը հետզհետէ ընկել է իւր նախկին բարձրութիւնից մինչև պօլիցիական բանտերի աստիճան և այսօր այն ներկայացնում է մի վերին աստիճանի այլանդակ հիմնարկութիւն, որ յարուցանում է ոչ միայն եւրոպացիների արհամարհանքը այլ և ամբողջ Ռուսիայի ինտելիգենցիայի ատելութիւնը առանց համոզմունքների, ազգերի և դաւանութիւնների խարութեան:

Ժողովականները, լսելով այս բացադրութիւնները և առանց այն էլ վաղուց համոզուած լինելով, որ ներկայում չը կայ Ռուսիայում դպրոց բառիս ոչ միայն լայն այլև փոքր իշտէ համապատասխան իմաստով, միաձայն վճռեցին ստորագրել այն ընդարձակ բողոքագիրը, որ առաջարկուեց նրանց: Այդ բողոքագիրը, որ պիտի ուղարկուի Պետերբուրգի ազատամիտ լրագրներին նաև պիտի ներկայացնուի մինիստրների կօմիտէին, դրական ոճով պահանջում է դպրոցական արմատական վերանորոգութիւն: Մակայն, քանի որ ապացուցուած է, որ դպրոցը չի կարող արմատապէս և ցանկալի ձևով վերանորոգուել հասարակական կենաքի ներկայ պայմաններում, անհրաժեշտ է փոխել Ռուսիայի ամբողջ ներքին քաղաքական-վարչական ոեժիմը: Այս հիման վրայ բողոքագիր ստորագրող ահազին բազմութիւնն իւր ձայնը միացնում է Պետերբուրգի, Մուկուայի, Կիեվի, Ղազանի և այլ քաղաքների լուսամիտ դասակարգերի արդարացի բողոքագրերին, որոնք միաձայն պահանջում են հիմնական վերանորոգութիւն պետական կենաքի կազմակերպութեան մէջ: Բողոքագիրը ստորագրելուց յետոյ ժողովը դեռ շարունակուեց և տեսեց մինչև 2 ժ. գիշերուայ: Ժողովը սկզբից մինչև վերջը կենդանի էր և գրաւիչ: Աւելորդ չենք համարում ասել, որ նոյն ժողովում առաջարկուեց և միաձայն ընդունուեց արտայայտել ատելութիւն և զգուանք «ՄОСКОВ. ՅԵДОМОСТИ» խաւարամիտ, «ՆՈՎ ՅՐԵՄ» խայտառակ և ուրիշ մի քանի ոուս լրագիրների,

որոնք ստորացրել են և ստորացնում են իրանց գոյութեամբ  
ոռուս մամուլի բարոյական վարկը:

Քսաներկու հայաբնակ վայրերից Թիֆլիսուղարկուածներ-  
կայացուցիչներն և Թիֆլիսի զանազան շրջաններից ընտրուած  
պատգամաւորները ապրել ամսի ընթացքում կազմեցին մի  
խնդրագիր ուստահայերի կողմից, որ այս օրերս պիտի ուղար-  
կուի Պետերբուրգ մինհստրների կօմիտէին և մի և նոյն ժա-  
մանակ ներկայացուի Կովկասի փոխարքայ կոմս Վարանցօվ—  
Դաշկօվին: Առաջ ենք բերում այդ խնդրագիրը ամբողջովին:—

«Մենք, հայերս, մեր բնակավարերում, քննելով Ռուսիոյ  
հայ ազգաբնակութեան կարիքները, Թիֆլիս ժողովուած մեր  
ներկայացուցիչների միջոցով մշակեցինք հետևեալը:—

1. Գումարել համառոսական ներկայացուցական ժողով՝  
ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնատութեան  
հիման վրայ իրաւունք տալով հայ ազգին մասնակցել նրան  
ներքին նահանգների հետ հաւասար հիմունքներով:

2. Ներմուծել Անդր-Կովկասում տեղական ինքնավարու-  
թիւն, առանց դասակարգերի խտրութեան, լայն հիմունքներով,  
հաստատելով.—ա) ինքնավար մասր զեմստվային միութիւն. բ)  
գաւռական (առանց նահանգականի) ինքնավարութիւն (զեմս-  
տվո), քաղաքային հասարակաց վարչութիւնները նկատելով որ-  
պէս առանձին միութիւններ. գ) անդրկովկասեան մի ընդհա-  
նուր զեմստվային ժողով իրաւունքով օրէնսդրական նախաձեռո-  
նութիւն ունենալու և Անդրկովկասին վերաբերեալ օրէնսագծերը  
նախօրօք քննելու:

3. Խղճի աղատութիւն: Բոլոր դաւանական և կրօնական  
սահմանափակումների ջնջումն: Աղատութիւն մայրենի լեզուով  
երդուելու բոլոր կառավարչական ու հասարակական հաստա-  
տութիւնների մէջ:

4. Աղատութիւն խօսքի, ժողովական և կրօնական  
գործադուլների (շտագ) և միութիւնների: Յայտարարական  
կարգ՝ մարդասիրական, կուլտուրական, հրատարակչական և  
այլ կրթական հիմնարկութիւնների հաստատելու որպէս և  
պարբերական մամուլի օրգաններ հրատարակելու համար: Տե-  
ղական մամուլի բոլոր տեսակների աղատումը գրաքննութիւնից  
և պատասխանատութիւնը միմիայն դատաստանի առջև:

5. Դասակարգային արտօնութիւնների վերացում: Կա-

նանց իրաւունքների հաւասարութիւն տղամարդկանց իրաւունքների հետ:

6. Անձնաւորութեան և կացարանի անձեռնմխելիութիւն: Անցագրային սիստեմի վերացումն կայսերութեան սահմաններում: Վարչական պատիժների ու տուգանքների ու խստացրուած հակողութեան վերացում: 1898-ի կանոնադրութեամբ ոստիկանական պահուորդութեան (страж) բարձումն և հաստատումն զեմստվային պահուորդութեան՝ ենթարկելով այն զեմստվաներին, իսկ քաղաքային ոստիկանութիւնը՝ քաղաքներին:

7. Լեզուի ազատութիւն ժողովներում: Տեղական լեզուով գործավարութիւն շինական հաստատութիւնների մէջ, այլ և գիւղական հասարակութիւնների փոխադարձ յարմարութիւնների համար:

8. Ընդհանուր պարտադիր ձրի սկզբնական կրթութիւն, մասնաւոր ձեռներէցութեան համար լիակատար ազատութիւն: յայտարարական կարգով դպրոցներ և ամեն տիպի ու կարգի կրթական հաստատութիւններ բանալու: Հասարակական ոյժերի մասնակցութիւն պետական միջնակարգ ու սկզբնական դըպրոցների կառավարութեան մէջ: Համալսարանի բացում թիֆլիսում երկու սեփի անձերի համար կովկասագիտութեան և տեղական լեզուների ամբիոններով, նաև բարձրագոյն մասնագիտական դպրոցների բացումն Անդկովկասում:

9. Եկամտի աճող (պրօգրեսիվ) հարկաւութիւն, վերացնելով անուղղակի հարկերը առաջին անհրաժեշտութեան առարկաներից:

10. Բանուորական աշխատանքի պայմանների բարելաւումն օրէնսդրական կարգով, կանոնաւորելով աշխատանքի օրաժամը և վերացնելով բանուորական միութիւններ կազմելու սահմանափակումները:

11. Պարտաւորել ամբողջ համայնքներին՝ ետ գնել միւգքաղաքական և ժամանակաւորապէս պարտաւորական (временное обязанности) գիւղացիների հողարաժինները (հածել) պետական գանձարանի օգնութեամբ, ներքին նահանգներին հետ հաւասար հիմունքներով: Աջակցութիւն գիւղական հասարակութիւններին՝ մասնաւոր կալուածատէրերից ետ գնել հողարաժիններից դուրս գտնուող այն հողերը, որոնցից մշտապէս օգտւում են գիւղացիք, որի համար պարտաւորեցնել գիւղացիական բանկը փոխատութիւն անել: Վարկային սամնաւոր հիմնարկութիւններին թոյլ տալ գործողութիւններ կատարել գիւղական հողարաժինները յետ գնելու լնկատմամբ:

12. Տեղական հողագուրկ և հողասակաւ գիւղացիներին նախադաս իրաւունք տալ Անդրկովկասի սահմանների մէջ—պետական ազատ հողերի վրայ ընակուելու Դիւղական աղքաբնակութեան դիւրութիւն տալ՝ անտառից, դաշտակներից ու արօտատեղերից օգտուելու:

14. Հաստատել երդուեանսերի դատարան ընդհանուր դատարաններին ենթակայ բոլոր գործերի համար, ի բաց չառնելով քաղաքական, կրօնական, պաշտօնավարական և մամուլի գործերը, այլև հաստատել ընտրուած հաշտարար դատաւորների ինստիտուտը: Թոյլաւութիւն՝ հաշտարար դատարանական հիմնարկութիւնների մէջ դատավարութիւնը տեղական լեզուներով կատարել. հայոց լեզուն պարտադիր դարձնել դատաւորների և դատական քննիչների համար հայաշատ տեղերում:

14. Վերականգնել հայոց եկեղեցու իրաւունքները, վերացնելով բոլոր սահմանափակումներն ու խոչնդունները, մանաւանդ վերաբերեալ. ա) հայոց եկեղեցու գոյքերի, կուլտուրական-կըրթական և բարեգործական հաստատութիւնների կառավարութեան, բ) եկեղեցական համայնքների ձեռքով հոգևոր-վարչական անձերի ընտրութեան, որպիսիք են-Ս. Եջմիածնի սինօդի անդամները, թեմակալ առաջնորդները, յաջորդները և այլք և գ) վերաբերեալ Ռուսաստանի և թէ հայաստանեալ բոլոր թեմերի եկեղեցական-աղքային պարբերական ժողովները կազմելու իրաւունքին:

15. Վերադարձնել հայոց եկեղեցուն նորա ծխական դըպրօցները և գոյքերը՝ վերացնելով՝ 1884—1903 թթ. տուած բոլոր օրէնքներն ու կարգադրութիւնները, որոնք վերաբերում են եկեղեցական-ծխական դպրոցներին և այդ դպրոցների և թէ հայոց եկեղեցիների, վանքերի ու հոգևոր դպրանոցների գոյքերին:

16. Պարտադիր հայերէն դասաւանդութիւնը սկզբնական դպրոցներում հայ ծագումով մանուկների համար, ոռուաց լեզուն ընդունելով որպէս մէկը գլխաւոր առարկաներից: Կրօնի, հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան լուրջ դասաւութիւն պետական միջնակարգ դպրոցներում՝ գլխաւոր առարկաներին հաւասար հիմունքներով:

17. Հաստատել Կովկասում հայ-կաթոլիկաց թեմ ընտրուած թեմակալ առաջնորդով, որ պիտի լինի հայազգի և հայ-կաթոլիկ եպիսկոպոս:

18. Վերացում նեղիչ և բացառիկ օրէնքների ու կառավարչական կարգադրութիւնների այն թիւրքա-հայ գաղթական-

ներին վերաբերեալ, որոնք ոռոսաց հպատակութիւն են ընդունած, տալով նրանց նաև իրաւունք այլ հպատակների հետ հաւասար հողարաժիներ ստանալու Անդրկովկասի սահման-ներում:

19. Հայերի զինուորական ծառայութիւնը խաղաղութեան ժամանակ կովկասի սահմաններում:

20. Կառավարչական եղանակով աքսորուած հայերի վերաբարձումը և ընդհանուր ներումն քաղաքական և կրօնական գործերի համար բոլոր տուժած անձերին:

Մենք անկեղծ և անխախտ հաւատում ենք ազգերի ամուր համերաշխութեան իրագործմանը: Լինելով մեր տառապեալ ժողովրդի բարոյական, տնտեսական և կրօնական շահերի ջերմ պաշտպան, մենք, միևնույն ժամանակ, ջերմ երկրպագու ենք և ընդհանուր մարդկութեան բարելաւութեան գաղափարին: Մենք հայ ժողովրդի բարեիքների պաշտպանութիւնը երբէք այն ուղղութեամբ չեն տանիլ, որ այն որևէ է կէտում հակասի մեր ընդհանուր հայրենիքի-Ռուսիայի և մեր բոլոր հարեւան ազգերի խական շահերին: Լինել հայրենասէր այն մտքով, ինչպէս մենք ենք հասկանում, կը նշանակէ լինել մարդասէր, ընկերասէր, լինել կողմնակից բուն քաղաքակրթութեան և պաշտպան բարձրադոյն իդէալների: Մենք հայրենասիրութիւնը հասկանում ենք այսպէս: Միրիր քո մերձաւորին, եղօրը, հօրը, մօրը, քոյրերին, աշխատիր նրանց բարոյական, տնտեսական շահերի համար այն ուղղութեամբ, որ քո աշխատանքը, միմնոյն ժամանակ, օգուտ բերի և քո հարեւաներին:

Այս տեսակէտից մենք ամենայն անկեղծութեամբ մի անգամ ընդ միշա հրատարակել ենք և կրկնում ենք, որ եղայրատեցութիւնը խորթ է մեզ համար: Մենք կըփափագէինք, որ այս ուղղութեամբ մտածէր և գործէր իւրաքանչիւր հայ, որ սիրում է իւր ազգը, որ ցանկանում է նրան խական բարիք: Հէսց այս իսկ տեսակէտից մենք ողջունում ենք հայերի համագումար ժողովի երկու շաբաթուայ ընթացքում խորապէս մտածած և խելացի մշակած այս խնդրագիրը: Մենք ուշի ուշով քննելով բոլոր կէտերը, չը գտանք մէկը, որ արտայայտելով ուսահայ ժողովրդի բուն կարիքները, գէթ մազի չափ գիպչէր մեր հարեւան ազգերի՝ վրացիների, թուրքերի կամ այլոց շահերին: Ոչ, ընդհակառակը, այն, ինչ որ արծարծւումք այդ խնդրագրի մէջ, արծարծուած է ամենայն խոհունութեամբ, ամենայն զգուշութեամբ

և այնպէս, որ մեր շահերը ձուլուած են ոչ միայն Կովկասեան բոլոր ազգերի, այլև ոռուս ժողովրդի և ամբողջ Ռուսիայի շահերի հետ:

Սակայն, դժբաղդաբար, այսպիսի տպաւորութիւն չի արել հայերի խնդրագիրը վրացիների մի մասի վրայ: Այն մասի, որ ժամանակ ժամանակ ցոյց է տալիս զարմանալի թեթեւամտութիւն նաև կասկածոտութիւն հայերի վերաբերմամբ: Այս անգամ «կերանորոգուած» «Հվերիալի» խմբագրատունն է այս թեթեւամտութեան և կասկածոտութեան գործօնը: Այդ լրագիրը բարձրացրել է մեզ համար միանդամայն անհասկանալի մի աղմուկ հայերի պետիցեայի մի քանի կէտերի նկատմամբ, մասնաւորապէս այն կէտի, որ վերաբերում է ոռուսահպատակութիւն ստացած տաճկահայերին: Հայերն իրանց պետիցիայում ոռուս պետութիւնից խնդրում են, որ այդ ողորմելի, թափառաշրջկի, խեղճ, անպաշտպան և, միմնոյն ժամանակ, վերին աստիճանի շխնարար, օգտակար և աշխատամոլ տաճկահայերին տրուին հողեր, որ նրանք, լինելով Ռուսիայի հպատակ, չը լինին զրկուած հպատակների տարրական իրաւոնքներից:

Ի՞նչ մի սարսափելի բան կայ այս խնդրում, ինչնույն վտանգաւոր վրացիների կամ ուրիշ կովկասեան բնակիչների համար: Մենք գլուխ ենք կոտրում և չենք կարողանում վնասակար մի կէտ գտնել: Բայց թեթեւամտութիւնն ու կասկածութիւնը վտանգ են նկատում այստեղ իսկ, ուր ոչինչ չըկայ: Եւ ահա «Հվերիա» լրագրի ողորմելի և խղճալի քաղաքագէաները ճիշճ են անում ապացուցանել իրանց ընթերցողներին, որ հայերի «ապետիցիայի» վերոյիշեալ կէտն ունի ինչոր դիմակաւորուած նպատակ վրացիների դէմ: Եւ այս խախուտ, աւագային հիմունքի վրայ «Հվերիայի» ազգամոլները հազար ու մի լուսանք են թափում պետիցիա կազմողների վրայ, կողմնակի և ուղղակի կերպով դատապարտելով նաև բուլոր ոռուսահայերին:

Մենք կանգ չենք առնիլ «Հվերիայի» թթու ազգամոլական, զրպարտիչ յօդուածների վրայ և ժամանակ էլ չունենք կանգ առնելու թեթեւամտութիւնը, կասկածութիւնը, զըրպարտութիւնն արժանի չեն երկար դիմադրութեան: Մենք միայն այսքանը կասենք «Հվերիան» շրջապատողներին և նրանց նման մտածող մեր միւս բոլոր վրացի եղբայրներին, որ նրանց սեղմած բոռնցքները, փրփրած բերանները, արիւսոտ աչքերը մեզ համար ոչ համոզիչ են և ոչ երկիւղալի: Մենք ուղում ենք լինել բարեկամներ, ընկերներ, եղբայրներ, զգալ միւս-

նոյն ցաւերը, հոգալ մի և նոյն մեր երկրի ընդհանուր շահերի համար միատեսակ անկեղծութեամբ և արհամարհում ենք ամեն մի սպառնալիք: Ուստի առաջարկում ենք վրաց կեղծ աղքասէրներին թազցնել բռունցքները իրանց գրպաններում և միանալ այն խոհեմ անկաշառ վրացի հայրենասէրների հետ, որոնք անկեղծ կերպով ուզում են հայերի հետ համերաշխ լինել և որոնք իսկ որ հասկացել են իրանց ժողովրդի շահերը:

Շ.

Բագուի նախկին քաղաքագույն և յայտնի ոռւս հրապարակախօս Ալ. Իվ. Նօվիկովը ուղղել է Բագուի այժմեան նահանգապետ իշխ. Նակաշիձէին մի խիստ ոճով գրուած նամակ, որով նա իշխանին և ոստիկանապետին մեղադրում է փետրուարի 6—9-ի կոտորածների համար: Նօվիկովն այդ նամակում իշխ. Նակաշիձէին անուանում է եղբայրասպան Կայչն, Յուլյա և այն: Որովհետեւ նամակի պատճէնները թէ Ուստաստանում և թէ Կովկասում տարածուել են հեղինակի ցանկութեամբ տասնեակ հազարներով, պ. Նօվիկովի մեղադրանքը աւելի ծանր կշիռ է ստանում իշխ. Նակաշիձէի համար: Այժմ «Եակին. Ազ » լրագիրը հաղորդում է, որ իշխան-նահանգապետը և ոստիկանապետը դիմել են դատարան գրաւոր գանգատով և մեղադրում են պ. Նօվիկովին զրպարտութեան համար: Դործը պիտի քննուի Բագուի նահանգական դատարանում: Պ. Նօվիկովին կը պաշտպանի մայրաքաղաքի նշանաւոր փաստարան Կարարչեկուկին, որ դատի ժամանակ կը գայ Բագու մի քանի օր առաջ գործը մանրամասն ուսումնասիրելու համար:

Այդ դատը առանձին հետաքրքրութիւն կունենայ նաև այն տեսակէտից, որ փետրուարի 6—9-ի կոտորածների վրայ կը պահպան լոյս և շատ նիւթ կը մտտակարարի սենատօր Կուգմինսկու քննիչ մասնաժողովին: